2023

Մասնակցություն համայնքի ավագանու նիստերին և հանրային լսումներին (2022-2023թթ)

Զեկույց

ՎԱՐԴԵՆԻՍ 2023

Ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել համայնքներում երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը՝ հզորացնելով նրանց հետապոտական և վերահսկողական կարողությունները:

Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «ՄԻՏՔ» ՀԿ-ների կողմից:

Սույն զեկույցը հրապարակվել է ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն, և այն չի արտացոլում ԱՄՆ դեսպանատան տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԱԽԱԲԱՆ 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 10

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 11

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 12

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 14

ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱՎԻՃԱԿ 14

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՀՀԶԾ-Ի ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՁՄԵԼՈՒՑ ՀԵՏՈ 15

ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱՎԻՃԱԿ 16

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ 17

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 29

ՀԱՎԵԼՎԱԾ 30

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՏԻՄ – Տարածքային ինքնակառավարման մարմին

ՀՀԶԾ – Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ՏԱՊ – Տարեկան աշխատանքային պլան

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակական կազմակերպություն

ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտության նյութ է հանդիսանում Վարդենիս խոշորացված համայնքում բնակիչների մասնակցությունը համայնքի կառավարմանը, համայնքային որոշումների կայացման գործընթացում համայնքապետարանի կողմից կիրառվող գործիքակազմը, ընթացակարգերը:

Հետազոտական թիմը ուշադրություն է դարձրել նաև ավագանու նիստերին, դրանց հեռարձակումներին, ինչպես նաև բնակիչների մասնակցությանը, քանի որ ավագանու նիստերը հեռարձակվում են, սակայն ոչ համապատասխան հեռարձակման տեխնիկայի առկայության, ինչպես նաև ավագանու անդամների միջանձնային հարաբերությունների պատճառով ավագանու նիստերին հիմնականում բնակիչների մասնակցություն չի լինում, իսկ նրանք, ովքեր ցանկանում են առցանց տարբերակով հետևել ավագանու նիստերին, բախվում են տարբեր անհարմարությունների՝ կապված հեռարձակման համար նախատեսված նյութատեխնիկական բազայի բացակայության հետ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է վեր հանել Վարդենիս խոշորացված համայնքում առկա խնդիրները բնակիչների մասնակցության բնագավառում՝ համայնքի կառավարմանը, ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացում, համայնքապետարանի կողմից կիրառվող գործիքակազմերին, ընթացակարգերին, ինչպես նաև ավագանու նիստերին մասնակցության առումով:

Ծրագրի ընթացքում կատարվել են հետևյալ գործողությունները.

- Այցելություններ Վարդենիս խոշորացված համայնքի բնակչության կազմով ամենամեծ բնակավայրեր, անանուն հարցումների իրականացում:
- Համայնքապետարանի կողմից կազմակերպվող հանրային լսումներին կամ քննարկումներին բնակիչների մասնակցության համար կիրառվող գործիքակազմերի և մեթոդների հետազոտություն:
- Հանրային լսումների կամ քննարկումների՝ օրերի և ժամերի մասին համայնքապետարանի հայտարարությունների հաճախականության և ձևի ուսումնասիրություն:
- Համայնքի ավագանու նիստերին բնակչության մասնակցության վերլուծություն:
- Ավագանու նիստերի անցկացման սրահի և ցուցատախտակների դիտարկումներ:
- Հետազոտության ընթացքում արվել են հետևյալ եզրակացությունները՝
- Վարդենիս խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակումը եղել է մասնակցային, սակայն ՏԱՊ-ի մշակումը՝ ոչ:
- Համայնքապետարանում ամրագրված է հստակ օր, որի ընթացքում բնակիչները իրենց հուզող հարցերով դիմում են համայնքի ղեկավարությանը:
- Հայտարարությունների 6 ցուցատախտակ է տեղադրված միայն Վարդենիս քաղաքում, սակայն ցուցատախտակների հայտարարությունները հաճախ չեն թարմացվում:
- Ավագանու ձևավորումից հետո ավագանու կողմից չեն հաստատվել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման և անցկացման կարգերը:
- Վարդենիսի համայնքապետարանում ավագանու նիստերը հեռարձակվում են համայնքապետարանի ֆեյսբուքյան և երբեմն յութուբյան էջերով, 1 տարվա կտրվածքով դիտումների քանակը հասնում է մոտավորապես 500-750 դիտումի:
- Ավագանու նիստերի դահլիճը ապահովված է որոշակի նյութատեխնիկական բազայով, սակայն ոչ ամբողջությամբ:
- Վարդենիս համայնքի բնակիչները ոչ միշտ են մասնակցում համայնքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումներին կամ քննարկումներին, եթե դրանք չեն վերաբերվում անձամբ իրենց կամ իրենց հարազատներին:
- Բնակիչները իրենց հուզող հարցերի մասին ցանկանում են ավելի շատ խոսել առանձին, քան հանրային քննարկման ժամանակ:
- Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում ավագանու նիստերի օրվա և ժամի մասին տեղեկատվություն չի տեղադրվում, իսկ կայքում տեղադրված ավագանու նիստերի արձանագրությունների մեջ հաջորդ նիստի օրը բացակայում է:
- Հետազոտության բացահայտումների հիման վրա մշակվել են հետևյալ առաջարկությունները.

- Համայնքի 2024թ. ՏԱՊ-ի նախագիծը մշակելուց հետո, մինչև ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնելը, համայնքի բնակավայրերում կազմակերպել և անցկացնել հանրային քննարկումներ դրանց բնակիչների համար:
- Ավագանու կողմից հաստատել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման և իրականացման կարգերը:
- Համայնքում տեղադրված ցուցատախտակները բերել բարվոք վիճակի և պարբերաբար տեղադրել հայտարարություններ՝ համայնքում կազմակերպվող միջոցառումների, հանրային լսումների և քննարկումների մասին:
- Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում և համացանցային պաշտոնական կայքէջում պարտադիր կերպով տեղադրել հայտարարություններ ավագանու նիստերի, հանրային լսումների կամ քննարկումների իրականացման մասին՝ առնվազն մեկ շաբաթ առաջ:
- Ավագանու նիստերի դահլիճը համալրել անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, մասնավորապես, փոխարինել բջջային հեռախոսը համապատասխան տեսախցիկով:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համայնքի բնակչության թիվ՝ *39,162 մարդ*
Համայնքի ղեկավար՝ *Վիարոն Խաչատրյան*

Վարդենիս խոշորացված համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան կողմում: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 2006-2008մ, կլիման խիստ է, ձմռան տևողությունը՝ գրեթե 6 ամիս, հունվարի միջին ջերմաստիճանը՝ -8°C, տարեկան տեղումների քանակը կազմում է 400-500մմ: Վարդենիս խոշորացված համայնքի բնակավայրերը հիմնականում բարձր լեռնային են:

Վարդենիս քաղաքը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այն գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: Համայնքի նախկին անվանումներն են եղել Վասակաշենը, Ոսկեշենը, իսկ 1969 թվականից վերանվանվել է Վարդենիս:

Համայնքի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերը հարուստ են պատմամշակութային հուշահամալիրներով և հուշարձաններով, ինչպիսիք են, օրինակ, Մաքենյաց վանքը, Սոթքի Բազիլիկ եկեղեցին, Այրքի, Կարճաղբյուրի մատուռները, դամբարանադաշտերը, Կիկլոպյան ամրոցները, խաչքարերը, Վարդենիսի Սբ. Աստվածածին եկեղեցին և այլ կոթողներ: Համայնքում առանձնակի ուշադրության է արժանի Մելիք-Շահնազարյանների տոհմին պատկանող գերեզմանատունը, որը վկայում է հայ իշխանական մելիքական տոհմի իշխանությունը Սոթք գավառում՝ Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանով: Մելիք-Շահնազարյանների տոհմը սերել է Դոփյանների իշխանական տոհմից, դեռևս 15-րդ դարում առանձնացել է Դոփյաններից և իր տիրույթներն էին Սոթք գավառի Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանը և Գեղարքունիք գավառի մի մասը: Տարածաշրջանը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Սևանա լճով, անապակ աղբյուրներով, ալպյան մարգագետիններով ու բազմաթիվ բնական հուշարձաններով:

Վարդենիս համայնքը 2021 թվականին միավորվեց՝ իր կազմում ընդգրկելով 1 քաղաքային՝ Վարդենիս, և 34 գյուղական բնակավայրեր: Վարդենիս համայնքի կենտրոն Վարդենիս քաղաքը ՀՀ մայրաքաղաք Երևանից գտնվում է 170 կմ, իսկ մարզկենտրոն Գավառից 75 կմ հեռավորության վրա: Վերին Շորժա, Ներքին Շորժա, Նորաբակ, Կութ, Ազատ և Սոթք գյուղերը հանդիսանում են սահմանամերձ բնակավայրեր:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 111658 հա: Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն՝ ըստ ՀՀԶԾ-ի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Էկոլոգիական վտանգ ներկայացնող խոշոր ձեռնարկությունների բացակայություն և համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ • Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն, ալպիական արոտավայրեր՝ գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար • Անխափան գործող ֆիքսված հեռախոսակապի, բջջային հեռախոսակապի՝ «Վիվասել-ՄՏՍ», «Յուքոմ» և «Բիլայն» շարժական կապի և ինտերնետ ծառայությունների առկայություն • 9 հեռուստաալիքների և կաբելային հեռուստատեսության հեռարձակում • Գազաֆիկացված բազմաբնակարան շենքեր (գրեթե բոլոր շենքերը) • 2860 տարեկան ժամ արևափայլք • Հիմնականում պահպանված նախադպրոցական, կրթական և մշակութային հիմնարկների տիպային շենքերի առկայություն	• Մեծ հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, մարզկենտրոն Գավառից • Որոշ հատվածներում անբարեկարգ փողոցներ և մայթեր • Մեծաքանակ բազմաբնակարան շենքերի անբարեկարգ տանիքներ և բակային հատվածներ • Անբարեկարգ ոռոգման ցանցեր • Սոցիալապես անապահով ընտանիքների, միայնակ թոշակառուների, ցածր եկամուտ ունեցողների հարաբերական մեծ թիվը համայնքում • Գործազրկության բարձր մակարդակը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ (վտանգներ)**
• Որակյալ աշխատուժի մեծ պոտենցիալ՝ տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն և մասնագիտական կրթությամբ կադրեր, որոնք կարող են կազմակերպել գյուղատնտեսության, կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական և այլ աշխատանքներ • Համայնքի և հարակից համայնքների տարածքներում զբոսաշրջության զարգացման տեսանկյունից, գրավիչ պատմամշակութային հարուստ ժառանգության բնության հուշարձանների և օբյեկտների առկայություն	• Արտագաղթի աճ • Որակավորված մարդկային ռեսուրսների պակաս՝ կապված արտագնա աշխատանքային միգրացիայի հետ • Բնակիչների անվճարունակության պատճառով գյուղատնտեսական նշանակության հողերի՝ համայնքին հետ հանձնում և դրանից բխող համայնքային հարկային եկամուտների նվազում • Համայնքի սահմանամերձ բնակավայրերում անվտանգության և պաշտպանության սպառնալիքներ

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են վարչական և ֆոնդային մասերի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին ակնկալվում է կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են տեղական հարկերի, տուրքերի, ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետության կողմից տրամադրվող դոտացիաների, այլ եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի սեփական եկամուտները 2022 թ. կազմել են համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 29.6 %-ը, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ 64 %-ը:

Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի կատարողական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք տարեցտարի աճ ունեն:

Վարդենիս համայնքի բնականոն զարգացման համար հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են.

- ՀՀ սահմանների անվտանգության և պաշտպանության հարցերը
- աշխատատեղերի բացակայություն
- բժշկական կադրերի բացակայություն
- ժամանակակից բուժսարքավորումների բացակայություն
- բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմակայունության անմխիթար վիճակը
- Տարածաշրջանում դեպի պատմական հուշարձաններ տանող ճանապարհների անմխիթար վիճակը, որը խոչընդոտում է զբոսաշրջության զարգացմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Այցելություններ են կատարվել Վարդենիս խոշորացված համայնքի բնակչության կազմով ամենամեծ բնակավայրեր և քանակական ու որակական հարցումների հարցաթերթիկների միջոցով վեր են հանվել բնակիչների կարծիքը համայնքում կազմակերպված հանրային քննարկումների և ավագանու նիստերի մասին: Հարցումները անցկացվել են անանուն, պատահականության սկզբունքով և պատասխանները օգտագործվել են ընդհանրացված տարբերակով:
- Հետազոտվել են համայնքապետարանի կողմից հանրային լսումներին բնակիչների մասնակցության համար կիրառվող գործիքակազմերը և մեթոդները՝ ավագանու ընդունած՝ տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման ու գործունեության ապահովման և համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման և իրականացման կարգերը:
- Ուսումնասիրվել է հանրային լսումների կամ քննարկումների՝ օրերի և ժամերի մասին համայնքապետարանի հայտարարությունների հաճախականությունը և ձևը:
- Ավագանու նիստերին բնակչության մասնակցության վերլուծություն՝ պարզելով նիստերին համայնքի բնակչության ընդհանուր թվի մեջ մասնակցության տոկոսը, արդյո՞ք լսելի է բնակչության ձայնը, բնակիչները բարձրացնու՞մ են իրենց հուզող հարցեր, թե՝ ոչ:
- Ավագանու նիստերի անցկացման սրահի և ցուցատախտակների դիտարկումներ. հետազոտության ընթացքում պարզել՝ նիստերի սրահը ունի՞ բոլոր հարմարությունները նիստեր կազմակերպելու համար, ցուցատախտակներին պատշաճ փակցվու՞մ են օրերն ու օրակարգային հարցերը, բնակիչները տեղեկացվու՞մ են նիստերի օրերի ու վայրի մասին:
- Ծրագրի շրջանակներում թիմը կազմել է հարցաշար և իրականացրել հարցումներ Վարդենիս համայնքի 35-ից 18 բնակավայրերի բնակչության շրջանում: Իրականացված հարցումների ընդհանուր քանակը բնակչության շրջանում կազմել է 273: Նույն հարցադրումները տրվել են նաև ՔՀԿ-ների ներկայացուցիչներին, պետական մարմիններում աշխատող անձանց, համայնքապետարանի աշխատակիցներին և այլն:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը տեղական մակարդակով հանրային մասնակցության մի շարք հնարավորություններ է ընձեռում: Ըստ օրենքի՝ համայնքի բնակիչներն, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ ՏԻՄ-երի որոշումների վրա՝ ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով[1]:

Համայնքի ավագանու նիստերը հրապարակային են, իսկ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում դրանք պետք է հեռարձակվեն առցանց՝ համայնքի պաշտոնական կայքում[2]: Համայնքի բնակիչները, համապատասխան քանակով ստորագրություններ ներկայացնելու դեպքում, կարող են հանդես գալ նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ[3]: Համայնքի ղեկավարի պարտականությունների մեջ է մտնում տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների և այլ ոլորտներում հանրային լսումների կամ քննարկումների կազմակերպումը[4]:

Բացի այդ, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին, որի կազմում կարող են ներգրավվել փորձագետներ, բնակիչներ, այլ շահագրգիռ անձինք, իսկ մինչև ավագանու նիստին ներկայացնելը այդ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվում են հանրային բաց լսումներ կամ քննարկումներ[5]:

Հանրային լսումների պահանջ է սահմանված նաև համայնքին տրվող սուբվենցիոն հայտերի ներկայացման դեպքում՝ ըստ 2006 թվականին կառավարության կողմից հաստատված և մի քանի անգամ փոփոխված կամ լրացված կարգի, սուբվենցիոն հայտի փաթեթում պետք է ներկայացված լինի հանրային լսումների արձանագրությունը[6]:

Բնակիչների մասնակցության վերաբերյալ կանոնակարգումներ պարունակող հիմնական ազգային իրավական ակտերն են ՀՀ սահմանադրությունը, «Նորմատիվ իրավական ակտերի

---

[1] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2018, հոդված 11, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153407
[2] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2022 խմբ. 16.12.2018, հոդված 11 կետ 5
[3] Նույնը, հոդված 14-16
[4] Նույնը, հոդված 37
[5] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2018, հոդված 84, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153407
[6] Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգ, ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 62-Ն որոշման Հավելված N 1, https://www.arlis.am/documentview.aspx?docid=128112

մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»:

Հանրային քննարկումը սահմանվում է որպես «նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց»: Ըստ օրենքի՝ հանրային քննարկումներն անցկացվում են նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններ ներկայացնելու հետ միաժամանակ հրապարակելու միջոցով: Հանրային քննարկումների տևողությունը սահմանվել է առնվազն 15 օր: Քննարկումների արդյունքները և դրանց հիման վրա լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը նույնպես պետք է հրապարակվեն: Հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած կառավարություն ներկայացված նախագիծը կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին: Հանրային քննարկում չիրականացնելու համար որևէ այլ պատժամիջոց նախատեսված չէ օրենքով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Վարդենիս բազմաբնակավայր համայնքի ավագանու ձևավորումից հետո, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ավագանու կողմից քննարկվել և հաստատվել է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը, իսկ տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման ու իրականացման կարգեր չեն քննարկվել և հաստատվել: Վարդենիս համայնքի ավագանու անդամների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված և տեղական ընտրությունների արդյունքում հաստատված կազմը 27 հոգի է: Ավագանու նիստերը անցկացվում են օրենքով սահմանված կարգով՝ հերթական և, անհրաժեշտությունից ելնելով, արտահերթ ձևաչափերով: Նորընտիր ավագանու կազմավորումից ի վեր Վարդենիս համայնքում անցկացվել է 19 նիստ, որից 10-ը՝ արտահերթ նիստ:[7]

ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱՎԻՃԱԿ

Համայնքապետարանի ֆեյսբուքյան էջից կարող ենք տեսնել, որ համայնքում իրականացվել են մի շարք հանրային քննարկումներ և՛ համայնքապետարանում, և՛ Վարդենիս խոշորացված համայնքի մի շարք բնակավայրերում: Հանրային քննարկումների հիմնական թեմաներն են բնակչությանը հուզող մի շարք հարցեր՝ իրենց բնակավայրում իրականացվող սուբվենցիոն ծրագրեր, գյուղատնտեսական միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ, բնակավայրերի փողոցների անվանափոխության հետ կապված հարցեր և այլն:

Այսպես, Արցախյան պատերազմում զոհված զինծառայողների անուններով փողոցների անվանափոխության համար հանրային քննարկում է հրավիրվել համայնքապետարանի կողմից 2022թ սեպտեմբերի 9-ին, որի մասին ֆեյսբուքյան էջով երեք օր առաջ տարածվել է հայտարարություն: Հանրային քննարկմանը մասնակցել են զոհված զինծառայողի ընտանիքի անդամները և մի քանի բարեկամներ, համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի երեք աշխատակիցներ: Սակայն, ինչպես պարզ դարձավ մեր կողմից ուսումնասիրված փաստաթղթերից, տվյալ քննարկմանը բնակչությունից մեծ արձագանք չի եղել, միայն ֆեյսբուքյան մեկնաբանությունների բաժնում ողջունվել է նախաձեռնությունը:

Նմանատիպ նախաձեռնությամբ հանդես է եկել նաև մեկ այլ զոհված զինծառայողի ընտանիք, պատկերը նույն է:

[7] Վարդենիսի Համայնքապետարանի պաշտոնական կայք՝ https://vardenis.am/Pages/DocFlow/Default.aspx?a=d&dt=CouncilorDecision&nt=1&f=true

Պատկեր 1. Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում տեղադրված հանրային քննարկման մասին հայտարարություն





ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՀԶԾ-Ի ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱԶՄԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ուսումնասիրելով համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) և 2023թ. Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ կարող ենք ասել, որ դրանք ամբողջությամբ բխում են համայնքի առջև ծառացած խնդիրներից: Ինչպես փաստեցին համայնքապետարանի աշխատակիցները՝ ՀՀԶԾ մշակելիս, նախօրոք իրականացվել է բնակիչների շրջանում հարցում և վերլուծության են ենթարկվել բոլոր հարցումների պատասխանները: Համայնքի ղեկավարը աշխատանքային խումբ է ձևավորել, որը այցելել է համայնքի բնակավայրեր, հանդիպել է բնակիչների և վարչական ղեկավարների հետ, վերջիններս ներկայացրել են բնակավայրում առկա խնդիրները, որոնք արձանագրվել են խմբի կողմից՝ դրանք ՀՀԶԾ-ում, ինչպես նաև համայնքի կողմից ներկայացվող սուբվենցիոն ծրագրերում ներառելու համար:

2022թ. հոկտեմբերի 27-ին Վարդենիսի համայնքապետարանում հրավիրվել է հանրային քննարկում, որի օրակարգում ՀՀԶԾ-ի, 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերի նախագծերի քննարկումն էր, սակայն ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ չի իրականացվել հանրային լսումներ կամ քննարկումներ: Հանրային լսման արձանագրությունից և մասնակիցների անվանացուցակից պարզ դարձավ, որ հանրային լսմանը մասնակցել են 34 բնակիչ: Սուբվենցիոն ծրագրերը մշակվել են համայնքի բնակավայրերից վեր հանված խնդիրների հիման վրա, օրինակ՝ լուսավորության ցանցի կառուցման, ասֆալտապատման, խմելու ջրի ջրագծերի կառուցման կամ վերակառուցման, ոռոգման ցանցի անցկացման, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման ծրագրերը ներառվել են սուբվենցիոն հայտերում՝ հաշվի առնելով բնակիչների առաջարկությունները:[8]

Համայնքի նորընտիր իշխանությունը ղեկավարում է 2021թ. մարտի 17-ից: Յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը ժամը 11:00-16:00 նշանակվել է բնակիչների ընդունելության օր: Իրականացված զրույցներից պարզ դարձավ, որ այդ օրերին համայնքապետին կամ համայնքի ղեկավարի առաջին տեղակալին են մոտենում բնակիչներ, ովքեր անձնական բնույթի հարցեր ունեն բարձրացնելու:

«Քաղաքացիները դիմել էին սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների կարգավորման նպատակով և այլ անձնական բնույթ կրող հարցերով: Դիմումատուների մեծ մասի պահանջները տեղում բավարարվեցին, իսկ որոշ դիմումներ էլ վերցվեցին հաշվառման, որոնց

[8] Վարդենիսի համայնքապետարանի Facebook-յան էջ, https://www.facebook.com/vardenishamaynq

պատասխանները կտրվեն համապատասխան ուսումնասիրություններից հետո՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում» (Վարդենիսի համայնքապետարանի ներկայացուցիչ):

Իսկ համայնքային նշանակության կամ բնակավայրերում առկա խնդիրների բարձրաձայնման հարցեր համայնքապետին են փոխանցում կամ բնակավայրերի վարչական ղեկավարների, կամ բնակավայրեր այցելած ավագանիների և համայնքապետարանի ներկայացուցիչների միջոցով:
Համայնքապետարանի ղեկավար անձնակազմը ունենում է հաճախակի հանդիպումներ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչների հետ, տեղում ծանոթանալու նրանց հուզող հարցերին:

Պատկեր 3-րդ և 4-րդ. Հանդիպումներ քաղաքացիների հետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 9-րդ կետի, մինչև 3000 և ավել եւ ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերն առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՓԱՍՏԱԹԻ ԻՐԱՎԻՃԱԿ

Վարդենիսի համայնքապետարանի կայքում առկա տեղեկատվության ուսումնասիրություններից պարզվեց, որ ավագանու յուրաքանչյուր նիստ հեռարձակվում է ֆեյսբուքյան հարթակում՝ ուղիղ հեռարձակմամբ: Ուսումնասիրության սկզբում հեռարձակվող տեսանյութերն ունեին որոշ ձայնային- տեխնիկական խնդիրներ, սակայն 2023 թ. մարտի 17-ի ավագանու նիստի ժամանակ նախկինում եղած խնդիրները լուծվել էին[9]: Հարցը բարձրացվել էր ավագանիների կողմից, քանի որ բնակիչների հետ ունեցած հանդիպումների ժամանակ արձանագրել էին այդ խնդիրները և համայնքապետարանը անմիջապես խնդրին լուծում էր տվել:

Վարդենիսի համայնքի ավագանին 2022թ. մարտի 28-ի N 13- Ն որոշմամբ ընդունել է «Ավագանու կանոնակարգ» փաստաթուղթը, որով կանոնակարգվում է ավագանու

[9] Վարդենիսի համայնքապետարանի Facebook-յան էջ, https://www.facebook.com/vardenishamaynq

գործունեության կազմակերպումը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը և այլ հարցեր:[10]

Ուսումնասիրելով համայնքի ավագանու նիստերի օրակարգերը՝ պարզ դարձավ, որ համայնքի բնակիչները նիստերի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ հանդես չեն եկել, քանի որ ավագանու նիստի վերաբերյալ նախօրոք բնակչությանը չեն տեղեկացրել: Ավագանու նիստերի անցկացման վայրի և օրվա մասին Վարդենիս համայնքի բնակիչները կարող են տեղեկանալ միայն Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջից՝ նիստը սկսվելուց հետո միայն ուղիղ հեռարձակման միջոցով:

Վարդենիս համայնքի 15,258 մարդ բնակչության համար համայնքի տարածքում տեղադրված է հայտարարությունների 6 ցուցատախտակ: Ցուցատախտակների մասին համայնքի բնակիչները չունեին որևէ տեղեկություն, հիմնականում ուշադրություն էին դարձնում ֆեյսբուքյան էջին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ներկայացնում ենք ՔՀԿ ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման արդյունքները: Հարցազրույցներ անցկացվել են 9 ՔՀԿ ներկայացուցիչների հետ:

Գծապատկեր 1. Որքանո՞վ եք տեղեկացված ավագանու գործունեությունից (լիազորություններ, խնդիրներ)



ՔՀԿ ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումից արձանագրեցինք, որ ավագանու գործունեության մասին հարցման 9 մասնակիցներից 8-ը բավականաչափ տեղեկացված են, իսկ 1 մասնակիցը՝ մասամբ:

[10] ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ավագանու Կանոնակարգ, 28.03.2022թ., https://vardenis.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=Kanonakarg

Գծապատկեր 2. Արդյո՞ք հետևում եք ավագանու նիստերի հեռարձակմանը (եթե ոչ, ապա ինչու՞)



ՔՀԿ բոլորը ներկայացուցիչները հետևում են ավագանու նիստերի հեռարձակմանը:

Գծապատկեր 3. Որպես համայնքի բնակիչ, որքանո՞վ եք տեղեկացված հանրային լսումներին Ձեր մասնակցության վերաբերյալ օրենսդրությանը



ՔՀԿ ներկայացուցիչները, որպես համայնքի բնակիչներ, տեղեկացված են հանրային լսումների մասին օրենսդրությանը:

Գծապատկեր 4. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր համայնքում անցկացվող հանրային լսումների մասին



ՔՀԿ բոլոր ներկայացուցիչները հանրային լսումների մասին տեղեկանում են համայնքապետարանի ֆեյսբուքյան էջից և համացանցային պաշտոնական կայքէջից:

Գծապատկեր 5. Երբևէ մասնակցել եք Ձեր համայնքում հանրային լսումներին (եթե ոչ, ապա ինչու՞)



Հանրային լսումներին ՔՀԿ ներկայացուցիչների չմասնակցելու պատճառներն են՝

- Հանրային լսումները աշխատանքային ժամին կազմակերպելը՝ 3
- ՔՀԿ ներկայացուցիչների զբաղվածությանը մեծ է՝ 3
- ՔՀԿ ներկայացուցիչները տեղյակ չեն եղել՝ 2

Գծապատկեր 6. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի հնգամյա զարգացման ծրագրից



ՔՀԿ ներկայացուցիչները տեղեկացված են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մասին:

Գծապատկեր 7. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի տարեկան աշխատանքային պլանից (ՏԱՊ)



ՔՀԿ ներկայացուցիչների մեծամասնություն է տեղյակ է համայնքի տարեկան աշխատանքային պլանից:

Գծապատկերներից կարող ենք վերլուծել, որ ՔՀԿ ներկայացուցիչները տեղեկացված են հանրային լսումներին մասնակցելու իրենց իրավունքների մասին, սակայն ոչ միշտ են դրանք կիրառում՝ աշխատանքային զբաղվածության, հանրային լսումներ աշխատանքային օրերին և ժամերին կազմակերպելու պատճառով: Նրանք հիմնականում տեղեկացված են ՀՀԶԾ-ից, ՏԱՊ-ից, սակայն հետևողական չեն դրանց իրականացմանը:

Նույն հարցաշարով հարցման են մասնակցել նաև 37 ուսուցիչներ երեք տարբեր ֆոկուս խմբերով: Ֆոկուս խմբային քննարկման արդյունքում, ունեցած զրույցներից կարող ենք արձանագրել, որ ուսուցիչների մեծամասնությունը չեն հետևում համայնքապետարանի սոց. ցանցում առկա նորություններին, չգիտեն՝ ինչ է ՀՀԶԾ-ն և ՏԱՊ-ը, երբևէ չեն մասնակցել հանրային որևէ լսման: Հանրային լսմանը չմասնակցելու հիմնական պատճառաբանությունը այն էր, որ կան կարծրատիպեր.

«Կինը ինչպե՞ս կարող է գնալ համայնքապետարան, անհանգստացնող հարցերը տան տղամարդն է լուծում:»

«Համայնքապետարանը այն վայրը չէ, որտեղ կարելի է այցելել:»

«Մեկ հետաքրքրող շատ հարցերի պատասխաններ կամ առաջարկություններ մենք բարձրացնում ենք այն ժամանակ, երբ հանդիպում ենք ունենում համայնքի ղեկավարի կամ համայնքապետարանի այլ ներկայացուցչի հետ:»

Հանդիպումների ընթացքում հիմնականում բարձրաձայնվում են համայնքի առջև ծառացած խնդիրները, ինչպիսիք են ոռոգման համակարգը, խմելու ջուրը, մանկապարտեզը, ինչպես նաև իրենց անձնական ընտանեկան բնույթի հարցեր՝ սոցիալական աջակցությունների տրամադրում, գույքահարկի զիջում:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հարցումներն իրականացվել են Վարդենիս համայնքի 35 բնակավայրերից 18-ի բնակիչների շրջանում: Իրականացված հարցումների ընդհանուր քանակը կազմել է 273:

Գծապատկեր 8. Վարդենիս խոշորացված համայնքի ո՞ր բնակավայրում եք բնակվում



Գծապատկեր 9. Ո՞ր տարիքային խմբին եք պատկանում



Հարցվողների զգալի մասը պատկանում է 30-50 տարիքային խմբին:

Գծապատկեր 10. Զբաղվածության տեսակը



Հարցվողների մեծամասնությունը (մոտ 115 բնակիչ) աշխատում է մասնավոր հատվածում, մոտ 80 բնակիչ՝ պետական հատվածում, իսկ 75-ը որևէ տեղ չի աշխատում:

Գծապատկեր 11. Որքանո՞վ եք տեղեկացված ավագանու գործունեությունից (լիազորություններ, խնդիրներ)



Համայնքի հարցված բնակիչներից 134-ը մասամբ են տեղեկացված ավագանու գործունեությունից, 54-ը բավականաչափ տեղեկացված են, իսկ 85-ը ընդհանրապես տեղյակ չեն:

Գծապատկեր 12. Արդյո՞ք հետևում եք ավագանու նիստերի հեռարձակմանը



Հարցվող 273 բնակիչներից 175-ը չի հետևում ավագանու նիստերի հեռարձակմանը, իսկ 98-ը հետևում է:

Գծապատկեր 13. Որպես համայնքի բնակիչ, որքանո՞վ եք տեղեկացված հանրային լսումներին Ձեր մասնակցության վերաբերյալ օրենսդրության մասին



273 հարցվողներից հանրային լսումների մասին իրենց իրավունքների մասին 69-ը բավականաչափ տեղեկացված են, 123-ը մասամբ են տեղեկացված, իսկ 81 ընդհանարապես տեղեկացված չեն:

Գծապատկեր 14. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր համայնքում անցկացվող հանրային լսումների մասին



Բնակիչներից 119-ը հանրային լսումների մասին բավականաչափ տեղեկացված են ֆեյսբուքյան էջից, 123-ը մասամբ են տեղեկացված, իսկ 31-ը ընդհանրապես տեղեկացված չեն:

Գծապատկեր 15. Երբևէ՞ մասնակցել եք Ձեր համայնքում հանրային լսումներին



273 հարցվողներից 192-ը երբեք չեն մասնակցել հանրային լսումների, իսկ 81-ը մասնակցել է:

Այն հարցին, թե ինչ եղանակ կամ միջոց պետք է ձեռնարկվի, որպեսզի խթանվի Ձեր մասնակցությանը հանրային լսումներին, հարցվողներ հիմնականում պատասխանել են՝

- Հայտարարությունները թող տեղադրվեն ավելի տեսանելի վայրում, որ կարողանանք մասնակցել:
- Հանրային քննարկումները կազմակերպվեն բնակավայրերում՝ բաց տարածքներում:
- Ինչ միջոց էլ որ առաջարկվի, չեմ մասնակցելու հանրային լսմանը, ինձ հուզող հարցերը ես անմիջապես կուղղեմ կամ բնակավայրի վարչական ղեկավարին կամ անմիջապես համայնքապետին:
- Դժվարանում եմ պատասխանել:

Վեր նշվածներից կարող ենք եզրակացնել, որ բնակիչները հիմնականում իրենց հուզող հարցերը ցանկանում են անձամբ բարձրաձայնել, իսկ հուզող հարցերը հիմնականում անձնական բնույթի են: Նման մոտեցումը վկայում է համայնքային/հավաքական մտածելակերպի թույլ մակարդակի մասին:

Գծապատկեր 16. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի հնգամյա զարգացման ծրագրից



273 հարցվողներից 192-ը տեղյակ չեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրից:

Գծապատկեր 17. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի տարեկան աշխատանքային պլանից (ՏԱՊ)



273 հարցվողներից 192-ը տեղյակ չեն համայնքի տարեկան աշխատանքային պլանից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության ընթացքում բացահայտումների հիման վրա կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- Վարդենիս խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակումը եղել է մասնակցային, սակայն ՏԱՊ-ի մշակումը՝ ոչ:
- Համայնքապետարանում ամրագրված է հստակ օր, որի ընթացքում բնակիչները իրենց հուզող հարցերով դիմում են համայնքի ղեկավարությանը, սակայն դրանք հիմնականում անձնական բնույթի խնդիրներ են:
- Հայտարարությունների 6 ցուցատախտակ է տեղադրված միայն Վարդենիս քաղաքում, սակայն ցուցատախտակների հայտարարությունները հաճախ չեն թարմացվում:
- Ավագանու ձևավորումից հետո ավագանու կողմից չեն հաստատվել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման և անցկացման կարգերը:
- Վարդենիսի համայնքապետարանում ավագանու նիստերը հեռարձակվում են համայնքապետարանի ֆեյսբուքյան և երբեմն յութուբյան էջերով, 1 տարվա կտրվածքով դիտումների քանակը հասնում է մոտավորապես 500-750 դիտումի:
- Ավագանու նիստերի դահլիճը ապահովված է որոշակի նյութատեխնիկական բազայով, սակայն ոչ ամբողջությամբ, որը հնարավորություն չի տալիս ապահովելու լիարժեք մասնակցություն:
- Վարդենիս համայնքի բնակիչները ոչ միշտ են մասնակցում համայնքապետարանի կողմից կազմակերպված հանրային լսումներին կամ քննարկումներին, եթե դրանք չեն վերաբերվում անձամբ իրենց կամ իրենց հարազատներին:
- Բնակիչները իրենց հուզող հարցերի մասին ցանկություն ունեն ավելի շատ խոսել առանձին, քան հանրային քննարկման ժամանակ:
- Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում ավագանու նիստերի օրվա և ժամի մասին տեղեկատվություն չի տեղադրվում, իսկ կայքում տեղադրված ավագանու նիստերի արձանագրությունների մեջ հաջորդ նիստի օրը բացակայում է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքի 2024թ. ՏԱՊ-ի նախագիծը մշակելուց հետո, մինչև ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնելը, համայնքի բնակավայրերում կազմակերպել և անցկացնել հանրային քննարկումներ դրանց բնակիչների համար:
- Ավագանու կողմից հաստատել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, համայնքում բաց հանրային քննարկումների և լսումների կազմակերպման և իրականացման կարգերը:
- Համայնքում տեղադրված ցուցատախտակները բերել բարվոք վիճակի և պարբերաբար տեղադրել հայտարարություններ՝ համայնքում կազմակերպվող միջոցառումների, հանրային լսումների և քննարկումների մասին:
- Վարդենիսի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում և համացանցային կայքէջում պարտադիր կերպով տեղադրել հայտարարություններ ավագանու նիստերի, հանրային լսումների կամ քննարկումների իրականացման մասին՝ առնվազն մեկ շաբաթ առաջ:
- Ավագանու նիստերի դահլիճը համալրել անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, մասնավորապես փոխարինել բջջային հեռախոսը համապատասխան տեսախցիկով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ավագանու Կանոնակարգ
- Համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգ
- Վարդենիս համայնքի ֆեյսբուքյան էջ
- Վարդենիս համայնքի համացանցային պաշտոնական կայք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցումը անցկացվում է անանուն և պատասխանները օգտագործվելու են ընդհանրացված տարբերակով: Խնդրում ենք պատասխանել անկեղծ և եղեք ուշադիր:

1. Վարդենիս խոշորացված համայնքի ո՞ր բնակավայրում եք բնակվում ————

2. Ո՞ր տարիքային խմբին եք պատկանում

- 16-30
- 30-50
- 50-ից բարձր

3. Զբաղվածության տեսակը.

- Աշխատում եմ պետական հատվածում (_____)
  հաստատություն կամ պաշտոն
- Աշխատում եմ մասնավոր գործատուի մոտ (_____)
  հաստատություն կամ պաշտոն
- Չեմ աշխատում (_____)

4. Որքանո՞վ եք տեղեկացված ավագանու գործունեությունից (լիազորություններ, խնդիրներ)

- Բավականաչափ տեղեկացված եմ
- Մասամբ եմ տեղեկացված
- Ընդհանրապես տեղեկացված չեմ

5. Արդյո՞ք հետևում եք ավագանու նիստերի հեռարձակմանը (եթե ոչ, ապա ինչու՞)

- Այո
- Ոչ _____

6. Որպես համայնքի բնակիչ, որքանո՞վ եք տեղեկացված համայնքում հանրային լսումներին Ձեր մասնակցության վերաբերյալ օրենսդրությանը

- Բավականաչափ տեղեկացված եմ
- Մասամբ եմ տեղեկացված
- Ընդհանրապես տեղեկացված չեմ

7. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր համայնքում անցկացվող հանրային լսումների մասին

- Բավականաչափ տեղեկացված եմ՝
  - ✓ Ֆեյսբուքյան էջ,
  - ✓ Համայնքապետարանի կայքէջ,
  - ✓ այլ եղանակ
- Մասամբ եմ տեղեկացված
- Ընդհանրապես տեղեկացված չեմ

8. Երբևէ մասնակցել եք Ձեր համայնքում հանրային լսումներին (եթե ոչ, ապա ինչու՞)

- Այո
- Ոչ _____

9. Նշե՛ք որևէ եղանակ կամ միջոց, որը կխթանի Ձեր մասնակցությանը հանրային լսումներին

_____

10. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի հնգամյա զարգացման ծրագրին

- Այո
- Ոչ

11. Արդյո՞ք տեղյակ եք Ձեր համայնքի տարեկան աշխատանքային պլանին (ՏԱՊ)

- Այո
- Ոչ